ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 1750 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 138-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի «Ագրոքիմիական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և գործառույթներ վերապահելու մասին» N 138-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 11-րդ և 12-րդ կետերի 3-րդ ենթակետերում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով՝

«5) գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգ և տեղազննություններ:».

3) 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ ենթակետով՝

«5) մոնիթորինգի և տեղազննությունների միջոցով բացահայտել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի նախապես պլանավորված և փաստացի արձանագրված նպատակների, արդյունքների, գործողությունների իրականացումը և բացթողումները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել դրանք շտկելու ուղղությամբ:».

4) 13-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «հակաանասնահամաճարակային» բառը փոխարինել «անասնահակահամաճարակային» բառով.

5) 13-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.2-րդից 13.5-րդ ենթակետերով՝

«13.2) իրականացնում է գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և տեղազննությունների համար տվյալների հավաքագրում և հաշվետվությունների կազմում.

13.3) իրականացնում է գյուղատնտեսական ծրագրերի նախնական, ընթացիկ և ավարտական տեղազննություններ և մոնիթորինգ.

13.4) իրականացնում է գյուղատնտեսական ծրագրերի ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրում, մշակում, ամփոփում և վերլուծություն.

13.5) իրականացնում է գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և տեղազննությունների շտեմարանների վարում՝ հաշվետվությունների (հարցաթերթեր, ձևաթղթեր, տեղեկանքներ և այլն) միջոցով.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ